Այնուհետև Մեսրոպ Տեր-Մովսեսյանն իր «История перевода Библии на армянский язык» գրքի մեջ, որ լույս է տեսել 1902 թվականին Պետերբուրգում, 225—238 էջերում նկարագրել է Պատճառաց գիրքը, իսկ մի այլ տեղում, նա այն կարծիքն է հայտնել, որ Պատճառաց գրքի հեղինակ Աբասի որդի Գրիգորն ապրել է 8-րդ դարից առաջ, որովհետև, ինչպես ենթադրում է նա, Գրիգորն օգտվել է միայն այն հեղինակների գործերից, որոնք 8-րդ դարից առաջ են ապրել։ Մեսրոպ Տեր-Մովսեսյանը դրանից եզրակացնում է, որ եթե Աբասի որդի Գրիգորը ուշ ժամանակի հեղինակ լիներ, իր գրքի մեջ կօգտագործեր նաև ավելի ուշ ժամանակ ապրած հեղինակների գրվածքներ։ Այդ բոլորից հետևեցնում է, որ Պատճառաց գրքի հեղինակը Զորոփորեցի Աբասի որդի Գրիգորն է, որ 678 թվականին թարգմանել է Սեղբեստրոսի վարքը[1]։

1907 թվականին «Հանդես ամսօրյայի» մեջ մի հոդված լույս տեսավ, «Գրիգոր որդի Աբասայ հեղինակ պատճառաց գրոց» վերնագրով, որի հեղինակ Ն. Ա.-ն, հակառակ Մեսրոպ Տեր-Մովսեսյանի պնդումներին, ցույց տվեց, որ Պատճառաց գրքի հեղինակը օգտվել է 12-րդ դարի հեղինակ Դավիթ Քորայրեցուց և 1213 թ. մեռած Մխիթար Գոշից, և Սանահնի 1214, 1215 և 1217 թվականների արձանագրությունների հիման վրա ապացուցեց, որ Պատճառաց գրքի հեղինակը 13-րդ դարի երկրորդ տասնամյակին եղել է Սանահնի վանքի առաջնորդ[2]։

Պատճառաց գրքի լավագույն օրինակը էջմիածնի Մատենադարանի № 1650/1878 (Կարենյան ցուցակ № 1608) ձեռագիրն է, որ թեև թվական չունի և հեղինակի ինքնագիրը չի, բայց գրված է հեղինակի կենդանության օրով։ Գրիչը ոմն Մովսես է, որ ձեռագրի մեջ ունի մի քանի հիշատակագրություններ. էջ 229ա ՁՄովսէս գրող գրոցս յիշեսջիմ, 286 բ, Ողորմեա Աստ Մովսիսի անպիտան գրողի։ Ստացողը՝ սկզբնապես Գերսամ վարդապետն է, որի անունը հայտնի է դարձյալ հիշատակագրություններից. 281բ էջում սկզբնական գրչի ձեռքով գրված է՝ Տեր Աստ ողորմեա ստացողի սորա Գերսամ վարդապետին։ Երկրորդ ստացողը՝ 13-րդ դարավերջի և 14-ի սկզբի՝ Պռոշյան տոհմից սերված նշանավոր տաղասաց Խաչատուր Կեչառեցին է։ Նա իր ձեռքով ձեռագրի մի քանի տեղերում հիշատակություն ունի այդ մասին։ 16ա էջում նա գրել է զԽաչատուր վրդ Կեչառվեցի ստացող սր տարիս յաղաւթս յիշեա»։

Ձեռագրի ժամանակի մասին էջմիածնի երբեմնի մատենադարանապետ Սահակ վրդ. Ամատունին իր կողմից ձեռագրի վերջում ավելացրած թղթերին, որ գլուխների ցանկն են պարունակում, գրել է, որ եթե ոչ ԺԲ դարում, այլ «ստույգ կարող եմ ասել, որ մատյանս ԺԳ դարի դարամտի առաջին մատաղներից մինն է»։

Մենք համաձայն ենք Ամատունու այդ որոշմանը։ Ձեռագիրն ստույգ կերպով 12-րդ դարի վերջի և կամ ամենաուշը 13-ի սկզբին բնորոշ գրչություն ունի, որի գիրը մեծ մասամբ հնագույն անցման գիր է, թեև երբեմն գրի ոճը փոխվում է, բայց բոլորն էլ միևնույն գրչի կողմից են գրված։ Այդ նշանակում է, որ այս ձեռագիրը հեղինակի կենդանության ժամանակ է գրվել և այն էլ ավելի առաջ, քան որ նա Սանահնի վանքում ոչ թե վանահայր էր, այլ միայն միաբան։

Գրիգորի այս հետաքրքիր գիրքը, անկասկած, գրվել է իբրև դասագիրք Սանահնի վանքի դպրոցում Աստվածաշնչի տեսական ուսումնասիրության նվիրված հեղինակի դասախոսությունների համար։

Աբասի որդի Գրիգորն իր ժամանակակիցներից մեծարվել է մեծ ռաբունապետ տիտղոսով։

Գրիգորի առաջնորդության շրջանում Սանահնի դպրոցը ծաղկման մեջ է գտնվել և ունեցել է գիտնական ուսուցիչներ։ Դպրոցի մասին թեև անմիջական տեղեկություններ չունենք, բայց 1231—1233 թվականների ընթացքում Սանահնում արտագրված

[1] Մեսրոպ վարդապետ, Նյութեր ս. գրքի ուսումնասիրության, «Արարատ», 1904, էջ 216։ Տե՛ս նաև Սոկրատայ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն, Վաղարշապատ, 1897, էջ 591 և առաջաբան, ԺԷ։

[2] Ն. Ա. Գրիգոր որդի Աբասայ, հեղինակ Պատճառաց գրոց, «Հանդես ամսօրյա», 1907, էջ 132։